

# ԿԿՈՒ

ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



ԹԻԻ 11

ՄԱՐՏ Բ. 2019

սխալ մը գործած պիտի ըլլայ ու ապագային պիտի զղջայ: Զրակ յամառ էր: Ինք որոշած էր ու վերջ: Դպրոց պիտի չերթար: Խեղճ մայրը ճարահատ դիմեց դաստիարակ ուսուցչուհիին, անոր օգնութիւնը խնդրելով: Զամբերատար ուսուցչուհին, նախ լսեց Զրակին տեսակետը, ապա բացատրեց ուսման անհրաժեշտութիւնը, սակայն Զրակ անդրդուելի մնաց,

աւելին՝ բացայայտօրէն ըսաւ, որ այնքա՛ն նեղութիւն պիտի պատճառէ ուսուցչուհիներուն, որ անոնք զինք անբաղձալի համարելով, դուրս դնեն դասարանէն որպէս դասաւանդութիւնը խանգարող անհնազանդ աշակերտ: Օրուան ընթացքին, Զրակ քանի մը անգամ դասարանին դրան առջեւ կեցած կ'ըլլար: Ներս կամ դուրս, ի՛նչ հարց: Կարելորդ ինք հասներ իր մուրազին՝ վերջ ի վերջոյ դպրոցէն վտարուէր: Կիսամեայ քննութեան նիշերն ալ ընդունելի չէին, այս ընթացքով չէր կրնար յաջողիլ:

(Շարունակելի)

## ՉԵՄ ՈՒՉԵՐ ԴՊՐՈՑ ԵՐԹԱԼ

Ռիթա Կաղեան-Տիբախբեան

Զրակ խօսուն աչքերով, ինքնավստահ ու դիրքաբորբոք: Կատակներ չէր, ընկերներուն անտեղի կատակները իրեն հաճելի չէին թուեր ու շուտով կատակը կը վերածուէր վիճաբանութեան, ապա՝ քաշքշուքի ու ծեծուղռտուքի:

Զրակ թէն ուշիմ աշակերտ էր, բայց դաս սորվիլ ու պարտականութիւն գրել չէր սիրեր: Ըստ իրեն անոնք աւելորդ ժամավաճառութիւններ էին:

- Գրե՛, կարդա՛, յետոյ ի՛նչ: Տարիներ շարունակ պիտի ուսանիմ, որ վկայականի մը տիրանամ, գործ կը գտնեմ կամ ո՛չ, այդ ալ կասկածելի: Է՛, ես ինչպե՞ս պիտի ապրիմ: Չէ՛, աւելի լաւ է, արհեստ մը սորվիմ ու լաւ դրամ շահիմ: Ինքնավստահ շեշտով կ'արտայայտուէր ան:

Իսկապէս, Զրակ կ'ուզէր աշխատիլ ու օգտակար դառնալ իր ընտանիքին: Ի՛նչ ապագայի մասին էր խօսքը, երբ կը զգար, որ հորը աշխատանքը անբաւարար էր ընտանիքին անհատնում ծախսերը հոգալու: Չէ՞ որ ինքն ալ տղամարդ էր, թէն հազիւ 13 տարեկան, բայց տարիները արագ կը սահին, շուտով կը մեծնար ու թել-թիկունք կ'ըլլար հոր՝ եթէ արհեստ մը սորված ըլլար:

Մայրը ի գուր փորձեց համոզել տղան, որ հրաժարի իր մտադրութենէն: Ըսաւ, թէ ուսումը կիսատ ձգելով ան մեծ



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑՑ՝ ՌԻԹԱ ԿԱՂԵԱՆ-ՏԻԲԱԽԲԵԱՆ ՆԿԱՐԱՇԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇԻՇԵԱՆ



## ԱՆՅԱԲՏԱԼԻ, ԲԱՅՅ ԻՐԱՒ

\* Նեփալի մեջ մարդիկ այնքան կը սիրեն պարել եւ ուրիշները նաեւ պարի հրաւիրել, որ իրենց լեզուին մեջ գոյութիւն ունի յատուկ բառ մը, *նաշոն* որ կը նշանակէ՝ «պարել տալ»:

\* Լուսնթագի վրայ օդի ճնշումը երկրագունդի ճնշումին 2.5 անգամն է: Ասիկա կը նշանակէ, որ այդ մոլորակին վրայ առարկաներ շալկելու համար մենք պետք պիտի ունենանք 2.5 անգամ անելի մկանային ուժի:

\* Քանատայի Նովա Սքոշիայի շրջանին մեջ արգիլուած է ինքնաշարժը քշելով նախաճաշի *սանտուիչ* ուտել:

\* Ոչ բոլոր հոյամողեզները հսկայ էին: *Մայքրորափթոր գաուանուս* կը համարուի ամենէն փոքր թռչող անասունը: Ան 0.8 մէթր երկարութիւն ունի:

\* «Վայքիսկ» կը նշանակէ «ծովահէններու յարձակում» հին Նորվեգեան լեզուով:

\* Վերածնունդի շրջանին Լեոնարտօ Տա Վինչիի նման արուեստագետներ կը գործածէին Թամփերա կոչուած ներկի տեսակը: Ասիկա կը պատրաստուէր իրարու հետ խառնելով հաւկիթ մը, ջուր եւ ներկի փոշի:

\* Ամեն տարի աշխարհի շուրջ, կը թափուին 22-25 միլիոն թոն գործածուած էլեկտրական մեքենաներ եւ գործիքներ:





# ԱՐԾԱԹԱՓԱՅԼ ԼՈՒՍԻՆԸ


Լուսինը, երկրին միակ բնական արբանեակը, մեր մոլորակին շուրջ կը դառնայ ճուսճեւ ուղեծիրի մը վրայ: Ուղեծիրի մէկ շրջանին տեւողութիւնն է 29 օր, 12 ժամ եւ 44 վայրկեան: Միեւնոյն ատեն ան իր առանցքին վրայ պտոյտ մը կը կատարէ:

Երկրէն դէպի լուսին միջին հեռաւորութիւնն է 384.400 քմ.:

Լուսինը 3.476 քմ. տրամագիծ ունի: Քաշողական ուժը իր հողին վրայ վեց անգամ աւելի նուազ է, քան երկրի մակերեսին վրայ, Լուսինը մթնոլորտ չունի, ինչ որ պատճառ կ'ըլլայ, որ հոն տիրեն ծայրայեղ շերմաստիճաններ՝ +100 աստիճան սելսիուս ցերեկին եւ -150 աստիճան գիշերը: Լուսնի մակերեսը ծածկուած է բազմաթիւ խռռչներով, ունի նաեւ լեռնաշղթաներ, որոնց բարձրութիւնը կրնայ հասնիլ մինչեւ 8000 մետրի: Ինչ որ «Լուսնի ծովեր» կը կոչեն, խորքին մէջ մութ տափաստաններ են եւ առաջին աստղաբաշխները զանոնք ովկիանոսներ կարծած են:

## Լուսնային երեւոյթներ

Լուսինը երկրին շուրջ կը դառնայ, միեւնոյն ատեն ինքն իր վրայ կը դառնայ: Այնպէս որ ան միշտ կը ներկայացնէ նոյն դեմքը դիտուած երկրէն, լուսնին տեսանելի դեմքն է ան: Լուսինը իր սեփական լոյսը չունի, այլ՝ կը ցոլացնէ արեւին լոյսը, ուրեմն, մշտապէս ունի լուսաւոր մաս եւ խաւար մաս: Լուսնին մեզի երեւցած տարբեր ձեւերը



կը կոչուին «երեւոյթներ»: Այս երեւոյթները տեղի կ'ունենան 29 օր եւ 12 ժամ եւ 44 վայրկեան տեւող շրջանաւորեան մը համաձայն, որ կը կոչուի լուսնաշրջան կամ լուսնային ամիս: Նոր լուսնին՝ լուսինը կը գտնուի երկրին եւ արեւին միջեւ, միայն բարակ շերտ մը կ'երեւի իր տեսանելի դեմքէն: Երբ լուսինը երկրին շուրջ դառնալով կը հեռանայ արեւէն, իր երեւելի մասը, որ կը կոչուի մահիկ հետզհետէ կը մեծնայ: Երբ լուսինը կը հասնի արեւէն իր ամենահեռաւոր կետին, կը տեսնենք իր ամբողջական կլոր դեմքը. ասիկա կը կոչուի լիալուսին: Ապա հետզհետէ իր տեսանելի դեմքը կը պզտիկնայ: Փոքրանալու հանգրուանն է:

## Լուսնին հետազոտութիւնը

Շնորհիւ առաջին աստղադիտակներուն՝ Կալիլեօ կրցաւ աւելի մօտիկէն զննել լուսինը: Հետագային, երբ աստիճանաբար աստղադիտակները աւելի զօրաւոր դարձան, մարդիկ կրցան անոր ֆիզիքական յատկութիւններուն մասին աւելի մանրամասն նկարագրութիւն ձեռք ձգել: Իսկ, աւելի ուշ՝ տիեզերագնացութեան միջոցաւ, լուսնի հետազոտութիւնը քառասմբակ յառաջդիմեց:

## ՄԱՐԴԸ ԱՆՋՐՊԵՏԻՆ ՄԷՋ

Ռուս Եուրի Կակարին առաջին մարդը եղավ, որ ճամբորդեց անջրպետին մեջ: 12 Ապրիլ 1961-ին ան Վոսթոք Ա. տիեզերանավով շրջան մը կատարեց Երկրին շուրջ: Ամերիկացիները սպասեցին մեկ տարի իրենց առաջին տիեզերագնացը տեղափոխելու համար Երկրային ուղեծիրի մը վրայ: 20 Փետրուար 1962-ին՝ ճոն Կլեն Երկրին շուրջ 3 շրջան կատարեց *Մորջիորի* տիեզերանավով:


### Մարդը Լուսնին վրայ

20 Յուլիս 1969-ին՝ Ափոլլո 11-ին ամերիկացի տիեզերագնացները պատմութեան մեջ առաջին անգամ ըլլալով իրենց ոտքերը դրին լուսնին վրայ: Մեր բնական արբանեակին վրայ քալող առաջին մարդը եղաւ Նիլ Արմսթրոնկ: Երկրորդը եղաւ Էտուին Էլտրին: Լուսնի վրայ էջքն ու անոնց առաջին քայլերը ցուցադրուեցան հեռատեսիլի վրայ: 1972-ին՝ Ափոլլոյի վերջին տիեզերագնացութեան, աստղանաւորները բազմաթիւ շրջաններ հետազօտեցին, լուսանկարներ առին եւ զետեղեցին գործիքներ, որոնք թանկագին տեղեկութիւններ հայթայթեցին լուսնին մասին:

Ժայռերու նմոշները, որոնք իրենց հետ բերին, քննուեցան ամբողջ աշխարհի գիտնականներու կողմէ: Այժմ գիտենք, թէ Երկիրը եւ լուսինը ունին միեւնոյն ծագումը եւ կազմուած են միեւնոյն շրջանին:

### Ոտնահետքեր լուսնի վրայ

«Ափոլլո»ի առաքելութեան գիտնականներուն թողած ոտնահետքերը պիտի չանհետանան, որովհետեւ հոն ո՛չ փոթորիկ կայ, ոչ ալ անձրեւ: Այդ ոտնահետքերը տեսանելի պիտի մնան առնուազն 10 միլիոն տարիներ:



## ԱՉԳ. ԶԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ ԶԱԳՈՒԿՆԵՐՍ ԿԸ ԳՐԵՆ

### «ՀԱՅ ԼԵՉՈՒՆ ՏՈՒՆ Է ՀԱՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԻՍ ԶՈՐՍ ԾԱԳԵՐՈՒՆ»

Մուշեղ Իշխան

Այո՛, հայ լեզուն է հայ ժողովուրդի գոյատեւման ուժը:

Մեր լեզուն մեր պատմութիւնն է, մեր գէնքը, մեր պաշտպանը, մեր գանձը եւ մեր փայլուն ապագան, իսկ հայ լեզուի գլխաւոր պահապանը հայ դպրոցն է: Հայ դպրոցը հայկական մթնոլորտը առողջ պահող սրբազան օճախն է:

Սփիւռքի գաղթածախներու մեջ ամենօրեայ հայկական դպրոցը մեծ եւ անփոխարինելի դեր ունեցած է դաստիարակելու սերունդներ օտար միջավայրի մեջ. հայը հայ պահելու աշխատանքը շատ դժուար է, մանաւանդ այս օրերուն:

Մենք հայ դպրոցէն ներս կը սորվինք հայերէն գրել, աղօթել, երգել նաեւ հայերէնով արտայայտել մեր միտքերը: Պետք է սիրելով եւ երկիւղածութեամբ պահպանենք զայն, որովհետեւ մեր ուսերուն պարտքն է պահպանել մեր մայրենին մոռացութենէ ու միշտ յիշենք, թէ որքան դժուարութեամբ ստեղծուած են մեր ոսկեղնիկ տառերը:

Արեւ Նալպանտեան

Է. կարգ

Ազգ. Զարեն Եփփէ Ճեմարան

### ՀԱՅ ԴՊՐՈՑԸ

Դարեր շարունակ ուսումը եղած է այն հիմնաքարը, որուն վրայ ուճացած ու զարգացած է մարդկային միտքը: Ուսման փափաքս, աստուածային այն պարգէնն է, որուն շնորհիւ պիտի կարենամ հասնիլ բարձրագոյն դիրքերու:

Դպրոցը եղած է այն կայծը, որ վառած է գիտութեան շահը: Պատուաբեր եղած է հայ դպրոցին դերը դարեր շարունակ, ան իր իւրայատուկ դրոշմը ձգած է պատմութեան էջերուն վրայ:

Հետեւաբար գիտակցելով ուսումի եւ դպրոցի կարեւորութեան պիտի շարունակեմ ուսանիլ ու վեր բարձրանալ ուսման աստիճաններէն, յօժարակամ նուաճելով բոլոր դժուարութիւնները մինչեւ հասնիմ նպատակիս, փառք ու պատիւ բերեմ ազգիս, հայրենիքիս ու դպրոցիս, որուն մեծապէս պարտական եմ:

Աննա Պետրոսեան

Է. կարգ

Ազգ. Զարեն Եփփէ Ճեմարան

### ԱՆՊԱՅՄԱՆ ՊԻՏԻ ՈՒՍԱՆԻՄ

Ուսումը անհրաժեշտ է մարդկային կեանքին մեջ մանաւանդ այս դարուս:

Հետեւաբար ուսման արժեքը շատ մեծ է ինձի համար, որովհետեւ ուսումով պիտի կերտեմ ապագաս:

Անհրաժեշտ է մանաւանդ հայ դպրոցի գոյութիւնը Սփիւռքի մեջ, որովհետեւ հայապահպանութեամբ պիտի պահպանենք մեր գոյութիւնը:

Մեծ սիրով կը հետեւիմ դասերուս մանաւանդ հայերէն լեզուին, որուն հանդէպ յատուկ սեր ունիմ մանկութենէս ի վեր եւ շանք կը թափեմ անթերի սորվելու մայրենի լեզուս:

Կը խորհիմ, որ ստիպողաբար ըրած գործ մը յաջողութեամբ չ'աւարտիր, մանաւանդ ուսումը:

Միակ իտեալս է յաջողութեամբ աւարտել ճեմարանը եւ հետեւիլ բարձրագոյն ուսման, որպէսզի իրականացնեմ իմ եւ ծնողքիս յոյսերը:

Ժան Արոշեան

Է. կարգ

Ազգ. Զարեն Եփփէ Ճեմարան